ՊԻ ԿԱ ԷՖ ԱՈՒԴԻՏ ՍԵՐՎԻՍ ՍՊԸ

ԷՔՍՊՐԵՍ ԿՐԵԴԻՏ ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՓԲԸ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

2023Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻԴՐՈՒԹՅԱՄԲ

ՀՀ, ք. Երևան, Խանջյան 19, 4-րդ հարկ, գրասենյակ 5, Հեռ.՝ +37411-577-544,
էլ.հասցե՝ auditservicellc@gmail.com, վեբկայք՝ www.pkfarmenia.com

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ԷՔՍՊՐԵՍ ԿՐԵԴԻՏ ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻՆ

ԿԱՐԾԻՔ

Մեր կողմից իրականացվել է **ԷՔՍՊՐԵՍ ԿՐԵԴԻՏ ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ** (Ընկերություն) ֆինանսական հաշվետվությունների աուդիտ, ընդ որում այդ հաշվետվությունները ներառում են 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների,սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, որոնք ներառում են հաշվապահական հաշվառման քաղաքականությունը:

Մեր կարծիքով կից ֆինանսական հաշվետվությունները տալիս են Ընկերության՝ 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ):

ԿԱՐԾԻՔԻ ՀԻՄՔԵՐ

Մենք աուդիտն իրականացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների միջազգային դաշնության պրոֆեսիոնալ հաշվապահների վարքագրքի (ՀՄԴ-ի Վարքագիրք) և Հայաստանի Հանրապետությունում կիրառելի՝ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նկատմամբ վարքագծի պահանջների, և մենք կատարել ենք վարքագծի նկատմամբ մեր մյուս պարտականությունները՝այդ պահանջների համաձայն: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝մեր կարծիքն արտահայտելու համար:

ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ և ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՕՂԱԿՆԵՐՈՒՄ ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Ընկերության ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ներին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար: Այդ նպատակով ղեկավարությունը սահմանում է անհրաժեշտ վերահսկողության համակարգ, որը թույլ է տալիս պատրաստել ֆինանսական հաշվետվություններ, որոնք ազատ են խարդախության կամ սխալի արդյունքում էական խեղաթյուրումից:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս, ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության՝անընդհատ գործելու հնարավորությունը գնահատելու, անընդհատ գործելուն առնչվող հարցերը բացահայտելու (եթե կիրառելի է), ինչպես նաև գործունեության անընդհատության ենթադրության վրա հիմնված հաշվառում վարելու համար, քանի դեռ ղեկավարությունը չի

նախատեսում լուծարել Ընկերությունը կամ դադարեցնել դրա գործունեությունը կամ չունի իրատեսական այլընտրանք, բացի նշվածները:

Կառավարման օղակներում ներգրավված անձիք պատասխանատու են Ընկերության ֆինանսական հաշվետվությունների կազմման գործընթացը վերահսկելու համար:

ԱՈՒԴԻՏԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՈՒԴԻՏԻ ՀԱՄԱՐ

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում՝ խարդախությունների կամ սխալների հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրումներից զերծ լինելու վերաբերյալ, ինչպես նաև ներկայացնել աուդիտորի եզրակացություն, որը կներառի մեր կարծիքը: Ողջամիտ հավաստիացումը բարձր աստիճանի հավաստիացում է, սակայն այն երաշխիք չի հանդիսանում, որ ԱՄՍ-ների համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումներ, երբ այդպիսիք կան: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի հետևանքով և համարվում են էական, եթե ակնկալվում է, որ դրանք առանձին-առանձին կամ միասին վերցված կարող են ազդել այս ֆինանսական հաշվետվությունների օգտագործողների՝դրնաց հիման վրա կայացրած տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համապատասխան իրականացվող աուդիտի շրջանակներում մենք կիրառում ենք պմասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն ամբողջ աուդիտի ընթացքում: Բացի այդ, մենք.

- Բացահայտում և գնահատում ենք ֆինանսական հաշվետվություններում խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք այդ ռիսկերին ուղղված աուդիտորական ընթացակարգեր, և ձեռք ենք բերում բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝մեր կարծիքն արտահայտելու համար: Խարդախության արդյունք հանդիսացող էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկն ավելի մեծ է, քան սխալի հետևանքով առաջացած խեղաթյուրման չբացահայտման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, փաստաթղթերի կեղծում, միտումնավոր բացթողումներ, կեղծ հայտարարությունների տրամադրում կամ ներքին վերահսկողության համակարգի չարաշահում:
- Պատկերացում ենք կազմում աուդիտին առնչվող ներքին վերահսկողության վերաբերյալ, որպեսզի մշակենք համապատասխան աուդիտորական ընթացակարգեր, բայց ոչ Ընկերության ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության պատշաճությունը, ինչպես նաև ղեկավարության կատարված հաշվապահական գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:
- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից անընդհատության սկզբունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և ձեռք բերված աուդիտորական ապացույցների հիման վրա հետևություն ենք անում, թե արդյոք առկա է իրադարձությունների կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է էական կասկած առաջացնել Ընկերության անընդհատ գործելու հնարավորության վերաբերյալ: Եթե մենք գալիս ենք եզրահանգման, որ գոյություն ունի էական անորոշություն, մենք պետք է մեր աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրենք ֆինանսական հաշվետվություններում համապատասխան

բացահայտումներին, կամ, եթե նման բացահայտումները պատշաճ կերպով ներկայացված չեն, մենք պետք է ձևափոխենք կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա իրադարձությունները կամ հանգամանքները կարող են հանգեցնել նրան, որ Ընկերությունը կորցնի իր անընդհատ գործելու կարողությունը:

- Գնահատում ենք ընդհանուր առմամբ ֆինանսական հաշվետվությունների ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները և արդյոք ֆինանսական հաշվետվությունները ներկայացնում են դրանց հիմքում ընկած գործարքներն ու իրադարձությունները այն ձևով, որն ապահովում է ճշմարիտ ներկայացումը:

Այլ հարցերի հետ մեկտեղ, մենք հաղորդակցում ենք կառավարման օղակներում ներգրավված անձանց հետ աուդիտի պլանավորված շրջանակների և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված էական թերացումների վերաբերյալ, որոնք ներառում են աուդիտի ընթացքում մեր կողմից բացահայտված ներքին վերահսկողության կարևոր թերությունները:

Ք. Երևան- 26.02.2024թ.

ՊԻ ԿԱ ԷՖ ԱՈՒԴԻՏ ՍԵՐՎԻՍ ՍՊԸ

Գլխավոր տնօրեն՝ Գոռ Դավթյան

Որակավորված աուդիտոր՝ Գայանե Թովմասյան

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ
31 դեկտեմբերի 2023թ.

Հազար դրամ

ԱՆՎԱՆՈՒՄԸ	Ծան.	2023թ.	2022թ.
Տոկոսային և նմանատիպ եկամուտներ	3	406,328	508,048
Տոկոսային և նմանատիպ ծախսեր	4	(143,515)	(210,462)
Զուտ տոկոսային եկամուտ		**262,813**	**297,586**
Շահաբաժնի տեսքով եկամուտներ			
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ		28,580	8,204
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր		(8,694)	(3,034)
Իրական արժեքով՝այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ներդրումներից զուտ շահույթ (վնաս)	5		
Արտարժութային գործարքներից ստացված զուտ շահույթ/(վնաս)	6	12,763	(156,977)
Այլ գործառնական եկամուտներ	7	29,075	123,417
Գործառնական եկամուտներ		**324,537**	**269,196**
Վարկերից և այլ փոխատվություններից առաջացած կորուստներ	8	84,083	499,525
Ընդհանուր վարչական ծախսեր	9	(149,885)	(127,998)
Այլ գործառնական ծախսեր	10	(55,227)	(52,721)
Շահույթ մինչև հարկվելը		**203,509**	**588,005**
Շահութահարկի գծով ծախս /փոխհատուցում/	11	(37,859)	(45,203)
Շահույթ (վնաս) հարկումից հետո		**165,650**	**542,800**
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք			
Համապարփակ ֆինասական արդյունք		**165,650**	**542,800**
Այդ թվում՝			
Մայր կազմակերպության բաժնեմաս		165,650	542,800
Չվերահսկվող բաժնեմաս			

Սույն Ֆինանսական հաշվետվությունները ընդունվել և հաստատվել են Ընկերության ղեկավարության կողմից 26.02.2024թ.

Ընկերության խորհրդի նախագահ, գործադիր տնօրեն **Ա.Արզումանյան**

Գլխավոր հաշվապահ՝ (Փորձագետ հաշվապահ) **Ռ. Մելիքյան**

«Էքսպրես Կրեդիտ ՈՒՎԿ » ՓԲԸ
6-30 ծանոթագրությունները կազմում են 2023թ.
ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

31 դեկտեմբերի 2023թ.

Հազար դրամ

ԱՆՎԱՆՈՒՄԸ	Ծան.	2023թ.	2022թ.
Ակտիվներ			
Դրամական միջոցներ և բանկային հաշիվներ	12	64,791	453,169
Դրամական շուկայում այլ տեղաբաշխումներ	13	743	1,388
Հաճախորդներին տրված վարկեր և այլ փոխատվություններ	14	3,587,783	3,346,375
Շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ներդրումներ	15	19,797	14,996
Կապիտալ ներդրումներ հիմնական միջոցներում և ոչ նյութական ակտիվներում		32,696	39,656
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	16	90,076	80,930
Հետաձգված հարկային ակտիվներ		31,938	21,252
Ստացվելիք տոկոսներ	17	19,198	19,940
Այլ ակտիվներ	18	215,514	248,176
Ընդամենը՝ ակտիվներ		**4,062,536**	**4,225,882**
Պարտավորություններ			
Բանկերից ստացված փոխառություններ և վարկեր	19	-	-
Դրամական շուկայից ստացված այլ փոխառություններ	20	467,614	564,806
Հաճախորդներից ներգրավված փոխառություններ	21	1,830,092	2,001,645
Պահուստներ		1,481	2,175
Վճարվելիք գումարներ	22	57	51
Հետաձգված հարկային պարտավորություններ			
Վճարվելիք տոկոսներ		10,318	26,478
Այլ պարտավորություններ	23	97,797	124,884
Ընդամենը՝ Պարտավորություններ		**2,407,359**	**2,720,039**
Կապիտալ			
Կանոնադրական կապիտալ		660,000	660,000
Պահուստներ,			
Գլխավոր պահուստ		898,717	898,717
Վերագնահատման պահուստներ			
Կուտակված շահույթ (վնաս)		96,460	(52,874)
Ընդամենը՝ Կապիտալ		**1,655,177**	**1,505,843**
Ընդամենը՝ Պարտավորություններ և կապիտալ		**4,062,536**	**4,225,882**

Ընկերության խորհրդի նախագահ, գործադիր տնօրեն՝ Ա.Արզումանյան

Գլխավոր հաշվապահ (Փորձագետ հաշվապահ) Ռ. Մելիքյան

«Էքսպրես Կրեդիտ ՈՒՎԿ » ՓԲԸ
6-30 ծանոթագրությունները կազմում են 2023թ.
ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ
31 դեկտեմբերի 2023թ.

Հազար դրամ

Հոդվածներ	Կանոնադրական կապիտալ	Էմիսիոն եկամուտ	Գլխավոր պահուստ	ՖՀՄՍ 9-ի կիրառման հետ կապված Փոփոխություններ	Չբաշխված շահույթ	Ընդամենը
Մնացորդն առ 01 հունվարի 2022թ.	405,000	255,000	898,717		(595,674)	963,043
Համապարփակ եկամուտ				(86,670)	629,470	542,800
Շահութաբաժիններ					(177,211)	(177,211)
Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2022թ.	405,000	255,000	898,717	(86,670)	33,796	1,505,843
Համապարփակ եկամուտ				(55,200)	220,850	165,650
Շահութաբաժիններ					(16,316)	(16,316)
Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2023թ.	405,000	255,000	898,717	(141,870)	238,330	1,655,177

Ընկերության խորհրդի նախագահ,
գործադիր տնօրեն՝ Ա.Արզումանյան

Գլխավոր հաշվապահ՝
(Փորձագետ հաշվապահ) Ռ. Մելիքյան

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ
31 դեկտեմբերի 2023թ.

Հազար դրամ

ԱՆՎԱՆՈՒՄԸ	2023թ.	2022թ.
Դրամական միջոցների զուտ հոսքեր գործառնական գործունեությունից	**(270,282)**	**342,916**
Դրամական միջոցների զուտ հոսքեր մինչև գործառնական ակտիվների և պարտավորությունների փոփոխությունը	**49,149**	**275,055**
Ստացված տոկոսներ	422,979	599,125
Վճարված տոկոսներ	(131,681)	(188,433)
Ստացված զուտ կոմիսիոն գումարներ	-	572
Վճարված աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումներ	(112,598)	(96,234)
Վճարված հարկեր	(129,551)	(39,975)
Դրամական միջոցների զուտ հոսքեր գործառնական ակտիվների և պարտավորությունների փոփոխություններից	**(319,431)**	**67,861**
Տեղաբաշխված միջոցներ նվազում (ավելացում)	(142,408)	48,345
Ներգրավված միջոցների ավելացում (նվազում)	(220,172)	(69,904)
Դրամական միջոցների զուտ հոսքեր այլ գործառնական գործունեությունից	43,149	89,420
Դրամական միջոցների զուտ հոսքեր ներդրումային գործունեությունից	**(15,950)**	**(871)**
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(23,466)	(871)
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների օտարում	**7,516**	
Դրամական միջոցների զուտ հոսքեր ֆինանսական գործունեությունից	**(113,482)**	**(129,308)**
Վճարված շահաբաժիններ	(16,316)	
Բանկերից ստացված վարկերի ավելացում (նվազում)		
Ստացված այլ փոխառությունների ավելացում (նվազում)	(97,166)	(129,308)
Արտարժույթի փոխարժեքի փոփոխության ազդեցությունը	8,349	(20,401)
Դրամական միջոցների զուտ հոսք	**(391,365)**	**192,336**
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի սկզբում	456,026	263,690
***Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի վերջում**	**65,021**	**456,026**

*Դրամարկղի գումարների համար պահուստ չի հաշվարկվում

Ընկերության խորհրդի նախագահ,
գործադիր տնօրեն՝ **Ա.Արզումանյան**

Գլխավոր հաշվապահ՝
(Փորձագետ հաշվապահ) **Ռ. Մելիքյան**

«Էքսպրես Կրեդիտ ՈՒՎԿ » ՓԲԸ
6-30 ծանոթագրությունները կազմում են 2023թ.
ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ներածություն

(ա) Գործարար միջավայր

Հայաստանի գործարար միջավայր

Ընկերությունն իր գործունեությունն իրականացնում է միայն Հայաստանում: Հետևաբար, Ընկերության գործունեության վրա ազդեցություն են ունենում Հայաստանի տնտեսությունը և ֆինանսական շուկաները, որոնց բնորոշ են զարգացող շուկայի հատկանիշներ: Իրավական, հարկային և օրենսդրական համակարգերը շարունակվում են զարգանալ, սակայն կարող են ունենալ տարբեր մեկնաբանություններ և ենթակա են հաճախակի փոփոխությունների, ինչը, այլ իրավական ու ֆինանսական խոչընդոտների հետ մեկտեղ, լրացուցիչ բարդություններ է ստեղծում Հայաստանում գործող ընկերությունների համար: Ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա գործարար միջավայրի ազդեցության ղեկավարության գնահատականը: Ապագա գործարար միջավայրը կարող է տարբերվել ղեկավարության գնահատականից:

(բ) Կազմակերպչական կառուցվածքը և հիմնական գործունեությունը

«Էքսպրես Կրեդիտ ՈՒՎԿ» ՓԲԸ-ն հիմնադրվել է 1997թ. դեկտեմբերի 09-ին «ՖԻՆԱՐ ՓԲԸ» անվամբ: 2002թ. Փետրվարի 27-ին Ընկերությունը վերանվանվել է «Էքսպրես Կրեդիտ» Փակ Բաժնետիրական Ընկերություն, իսկ 2003թ. փետրվարի 11-ին ՀՀ Կենտրոնական Բանկի կողմից ստանալով վարկային կազմակերպության գործունեության թիվ 1 լիցենզիան՝ վերանվանվել է «Էքսպրես Կրեդիտ ՈՒՎԿ» ՓԲԸ: Ընկերությունը գործում է ք.Երևան, Չարենցի 28/2 հասցեում:

Վարկային կազմակերպության կողմից բացված են ՀՀ դրամով և արտարժույթով բանկային հաշիվներ «Արարատբանկ ԲԲԸ-ում, «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ում, «Արմսվիսբանկ ՓԲԸ-ում, «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ ՓԲԸ-ում, «Էվոկաբանկ» ՓԲԸ-ում որոնց միջոցով իրականացվում են անկանխիկ գործառնությունները: Կազմակերպությունում 2012թ.-ի հոկտեմբեր ամսից առկա է տեխնիկապես հագեցված դրամարկղային հանգույց, որի միջոցով էլ իրականացնում է կանխիկ գործառնություններ: Նշված գործառնությունները վարկային կազմակերպությունը կատարում է ինչպես դրամով, այնպես էլ արտարժույթով:

Ընկերության աշխատակիցների ցուցակային թվաքանակը ժամանակաշրջանի վերջի դրությամբ կազմում է 19 անձ:

Ընկերության կառավարման բարձրագույն մարմինը Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովն է, որն ունի Ընկերության կառավարման և գործունեության ցանկացած հարցի վերջնական լուծման իրավունք: Ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է գործադիր տնօրենը:

Պատրաստման հիմունքներ

(ա) Համապատասխանության մասին հայտարարություն

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից մշակված և հրապարակված Ֆինանսական Հաշվետվությունների Ներկայացման Միջազգային Ստանդարտների (ՖՀՆՄՍ) և Ֆինանսական Հաշվետվությունների Մեկնաբանությունների Միջազգային Կոմիտեի (ՖՀՄՄԿ) կողմից թողարկված Մեկնաբանությունների համաձայն: Համեմատական տեղեկատվությունը և ֆինանսական հաշվետվությունները ներառում են Ընկերության ֆինանսական գործունեության արդյունքները և դրամական հոսքերը 31.12.2022թ. ավարտված տարվա համար:

(բ) **Չափման հիմունքները**

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են իրական արժեքի սկզբունքի հիման վրա՝ Շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների ու պարտավորությունների, ինչպես նաև իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ակտիվների համար, բացառությամբ այն ակտիվների, որոնց իրական արժեքը հնարավոր չէ որոշել: Այլ ֆինանսական ակտիվները և պարտավորությունները հաշվառվում են ամորտիզացված արժեքով, իսկ ոչ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները հաշվառվում են պատմական արժեքով: Ֆինանսական տեղեկատվությունը ներկայացված է ՀՀ դրամով՝ հազարների ճշտությամբ:

(գ) **Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթ**

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը ՀՀ դրամն է ('դրամ'), որը հանդիսանում է Ընկերության ֆունկցիոնալ արժույթը և սույն ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը: Ֆինանսական ամբողջ տեղեկատվությունը ներկայացված է դրամով՝ հազարների ճշտությամբ:

(դ) **Գնահատումների և դատողությունների օգտագործում**

Այս ֆինանսական հաշվետվությունները ՖՀՄՍ-ի պահանջներին համապատասխան պատրաստելու համար ղեկավարությունը կատարել է մի շարք դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն ունեն հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման, ինչպես նաև ակտիվների, պարտավորությունների, եկամտի և ծախսի ներկայացված գումարների վրա: Պատմական փորձի և տվյալ պայմաններում հիմնավորված այլ գործոնների վրա հիմնված գնահատումներն ու դրանց հետ կապված ենթադրությունները հնարավորություն են տալիս դատողություններ անել ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժենքների վերաբերյալ, որոնք հնարավոր չէ որոշել այլ աղբյուրներից: Բոլոր դեպքերում, չնայած գնահատումները հիմնվում են ղեկավարության

կողմից ընթացիկ իրադարձությունների լավագույն պատկերացումների վրա,փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

Գնահատումներն ու համապատասխան ենթադրությունները շարունակաբար վերանայվում են: Հաշվապահական գնահատումների վերանայումները ճանաչվում են այն ժամանակաշրջանում որում վերանայվել են և այն ապագա ժամանակշրջաններում, որոնց վրա կարող են ազդեցություն ունենալ: Հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ժամանակ կատարած դատողությունների, գնահատումների և ենթադրությունների վերաբերյալ տեղեկատվութունը, որոնք առավել էական ազդեցություն ունեն ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարների վրա, ներկայացված է ստորև՝

Անընդհատության սկզբունք

Ղեկավարությունը պատրաստել է այս ֆինանսական հաշվետվությունները անընդհատության սկզբունքի հիման վրա: Այս դատողությունն անելիս ղեկավարությունը հաշվի է առել Ընկերության ֆինանսական վիճակը, ընթացիկ մտադրությունները,գործառնությունների եկամտաբերությունը և ֆինանսական ռեսուրսների հասանելիությունը:

Ընկերությունը կայուն հասույթ է ստանում իր բիզնես գործունեությունից: Ղեկավարությունը չի ակնկալում, որ իրավիճակը կարող է առաջացնել իր գործունեության անընդհատության անհամապատասխանություն՝ հաշվի առնելով դրական գործառնական դրամական հոսքերի շարունակականության ակնկալիքը:

Գնահատումներ կատարելուց հետո Ընկերության ղեկավարությունը ողջամիտ ակնկալիք ունի, որ Ընկերությունը տեսանելի ապագայում կարող է ապահովել իր գործունեության անընդհատությունը: Հետևաբար իր ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս Ընկերությունը շարունակում է հիմնվել անընդհատության սկզբունքի վրա, այդ իսկ պատճառով սույն ֆինանսական հաշվետվությունները չեն պարունակում որևէ ճշգրտումներ, որոնց անհրաժեշտությունն ի հայտ կգար այն դեպքում, եթե Ընկերությունը ի վիճակի չլիներ ապահովել իր գործունեության շարունակականությունը:

Իրական արժեքի չափում

Մի շարք ակտիվներ և պարտավորություններ պահանջվում է չափել իրական արժեքով և/կամ բացահայտել դրանց իրական արժեքը Ընկերության ֆինանսական հաշվետվություններում:

Ընկերության ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի չափման համար հնարավորինս օգտագործվում են շուկայական դիտարկելի ելակետային տվյալներ: Իրական արժեքի չափման համար օգտագործվող ելակետային տվյալները դասակարգվում են ըստ տարբեր մակարդակների՝ կախված նրանից, թե որքանով են գնահատման մեթոդի մեջ օգտագործվող տվյալները դիտարկելի («իրական արժեքի հիերարխիա»):

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Ընկերությունը կիրառել է հետևյալ վերանայված ՖՀՄՍ-ները, որոնք ուժի մեջ են մտել 2023 թվականի հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար: Ընկերությունը չի կիրառել որևէ ստանդարտ կամ փոփոխություն, որը նախկինում ընդունվել է, բայց ներկայումս դեռ գործող չէ:

Փոփոխությունների էությունը և ազդեցությունները նկարագրված են ստորև.

Նոր և վերանայված ստանդարտներ և մեկնաբանություններ, որոնք կիրառելի են 2023թ. հունվարի 1-ից և դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար

Ներքոհիշյալ նոր ստանդարտներն ու փոփոխությունները, որոնք առաջին անգամ կիրառվել են 2023թ., որևէ էական ազդեցություն չեն ունեցել Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:

Ստանդարտ	Ստանդարտի կամ մեկնաբանության անվանումը
ՖՀՄՍ 3	Հղումներ հայեցակարգային հիմունքներին (ՖՀՄՍ 3 փոփոխություններ)
ՀՀՄՍ 16	Մուտքեր նախքան նախատեսված օգտագործումը (ՀՀՄՍ 16 փոփոխություններ)
ՀՀՄՍ 37	Անբարենպաստ պայմանագրեր. Պայմանագրի կատարման ծախսումներ *(ՀՀՄՍ* 37 փոփոխություններ*)*
ՖՀՄՍ 1, ՖՀՄՍ 9, ՀՀՄՍ 41, ՖՀՄՍ 16	2018-2020թթ. ՖՀՄՍ-ների տարեկան բարեփոխումներ (ՖՀՄՍ 1, ՖՀՄՍ 9, ՀՀՄՍ 41, ՖՀՄՍ 16 փոփոխություններ)
ՖՀՄՍ 17 և ՖՀՄՍ 4	Ապահովագրական պայմանագրեր և ՖՀՄՍ 17 Ապահովագրության պայմանագրերի փոփոխություններ
ՀՀՄՍ 1	Հաշվապահական հաշվառման քաղաքականության բացահայտում (Փոփոխություններ ՀՀՄՍ 1-ում և ՖՀՄՍ-ի պրակտիկայի դրույթ 2-ում)
ՀՀՄՍ 12	Մեկ գործարքից բխող ակտիվների և պարտավորությունների հետ կապված հետաձգված հարկ (Փոփոխություններ ՀՀՄՍ 12-ում) և Միջազգային հարկային բարեփոխումներ. Երկրորդ սյունակի մոդելային կանոններ
ՀՀՄՍ 8	Հաշվապահական հաշվառման գնահատումների սահմանում

Ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Ընկերության կողմից

Այս ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթվի դրությամբ Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից թողարկվել են որոշակի նոր ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք սակայն դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Ընկերության կողմից:

Ղեկավարությունը կանխատեսում է, որ բոլոր կիրառելի հրապարակումները կներդրվեն Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականությունում սկսած հրապարակման ուժի մեջ մտնելու ամսաթվին հաջորդող առաջին իսկ ժամանակաշրջանից: Ընթացիկ տարում չկիրառված նոր ստանդարտները, փոփոխությունները և մեկնաբանությունները չեն բացահայտվել, քանի որ չի ակնկալվում, որ դրանք էական ազդեցություն կունենան Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա և ներկայացված են ստորև.

Ստանդարտ	Ստանդարտի կամ մեկնաբանության անվանումը	Ուժի մեջ է
ՀՀՄՍ 1	Պարտավորությունների դասակարգում որպես ընթացիկ կամ ոչ ընթացիկ (Փոփոխություններ ՀՀՄՍ 1-ում)	*1 հունվարի 2024թ.*
ՀՀՄՍ 16	Վարձակալության պարտավորություն վաճառքի և վարձակալության ժամանակ (Փոփոխություններ ՖՀՄՍ 16-ում)	*1 հունվարի 2024թ.*
ՀՀՄՍ 1	Դաշնագրերով ոչ ընթացիկ պարտավորություններ (Փոփոխություններ ՀՀՄՍ 1-ում)	*1 հունվարի 2024թ.*

2. ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման ժամանակ կիրառվել են հետևյալ սկզբունքները: Հաշվապահական քաղաքականությունը կիրառվել է հետևողականորեն:

Եկամուտների և ծախսերի ճանաչում

Եկամուտը ճանաչվում է այն դեպքում, երբ հավանական է, որ տնտեսական օգուտները կհոսեն Ընկերություն և ստացված եկամուտը հնարավոր է արժանահավատորեն չափել: Ծախսը ճանաչվում է այն ժամանակ, երբ հավանական է, որ տնտեսական օգուտները կարտահոսեն Ընկերությունից և ծախսը հնարվոր է արժանահավատորեն չափել: Հետևյալ չափանիշները նույնպես պետք է հաշվի առնվեն մինչև եկամտի ճանաչումը:

Տոկոսային ծախսեր և եկամուտներ

Տոկոսային եկամուտներն ու ծախսերը բոլոր տոկոսաբեր ֆինանսական գործիքների համար, բացառությամբ առևտրային նպատակներով պահվող կամ ֆինանսական արդյունքներով ճշտվող՝ իրական արժեքով հաշվառվող գործիքների, ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես 'տոկոսային եկամուտ' և 'տոկոսային ծախս': Եթե ֆինանսական ակտիվները կամ նմանատիպ ֆինանսական ակտիվների խմբի հաշվեկշռային արժեքը նվազում է արժեզրկումից կորուստների պատճառով, տոկոսային եկամուտը շարունակում է ճանաչվել՝ կիրառելով սկզբնական արդյունավետ տոկոսադրույքը նոր հաշվեկշռային արժեքի նկատմամբ:

Միջնորդավճարներից և այլ նմանատիպ վճարներից եկամուտներ ու ծախսեր

Միջնորդավճարները, վարձավճարները և այլ եկամտային ու ծախսային հոդվածները հիմնականում ճանաչվում են հաշվեգրման սկզբունքով, ծառայությունների մատուցման ընթացքում:

Զուտ առևտրային եկամուտ

Զուտ առևտրային եկամուտը ներառում է արտարժույթի առուվաճառքից զուտ եկամուտը կամ ծախսը:

Արտարժույթի փոխարկում

Արտարժույթով կատարված գործարքները վերահաշվարկվում են գործառնական արժույթով՝ գործարքի օրվա փոխարժեքով: Արտարժույթով արտահայտված առևտրային նպատակներով պահվող ակտիվների և պարտավորությունների փոխարկումից առաջացած օգուտը և վնասը ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության 'զուտ առևտրային եկամուտ' հոդվածում,

մինչդեռ ոչ առևտրային ակտիվների փոխարկումից գոյացող օգուտը կամ վնասը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության 'այլ եկամուտ' կամ 'այլ ծախս' հոդվածում: Արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները փոխարկվում են

գործառնական արժույթով՝ կիրառելով ֆինանսական վիճակի մասին հաշվետվության ամսաթվի դրությամբ գործող փոխարժեքը:

Պայմանագրային և տվյալ գործառնության օրվա դրությամբ փոխարժեքի տարբերությունը ներառվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության 'Արտարժույթի առուվաճառքից զուտ առևտրային եկամուտ' հոդվածի 'զուտ առևտրային եկամուտ' ենթակետում:

Ստորև ներկայացվում են ֆինանսական հաշվետվությունների պատրաստման ընթացքում Ընկերության կողմից օգտագործված տարեվերջյան փոխարժեքները.

	31 Դեկտեմբեր 2023	31 Դեկտեմբեր 2022
ՀՀդրամ/ 1ԱՄՆդոլար	404.79	393.57
ՀՀդրամ/1Եվրո	447.90	420.06
Ոսկու ստանդարտ ձուլակտորներ	27048.92	22950.41

Հարկում

Հաշվետու տարվա շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Շահութահարկը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ բացառությամբ այն հարկերի, որոնց գծով գործառնությունների արդյունքները ճանաչվել են սեփական կապիտալում, որի դեպքում հարկերը նույնպես ճանաչվում են սեփական կապիտալում:

Ընթացիկ հարկը տարվա համար հարկվող եկամուտներից վճարվելիք հարկն է՝ հաշվապահական հաշվեկշռի ամսաթվին գործող հարկային դրույքներով, ինչպես նաև նախորդ տարիների համար վճարվելիք հարկերի ճշգրտումները:

Հետաձգված հարկերը հաշվարկվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվության պարտավորությունների մեթոդի համաձայն: Հետաձգված հարկերը հաշվի են առնում բոլոր ժամանակային տարբերությունները, որոնք առաջանում են ֆինանսական հաշվետվություններում ճանաչված ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային գումարների միջև, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ հետաձգված շահութահարկը առաջացել է գուդվիլի կամ կազմակերպությունների միավորում չհանդիսացող գործառնություններում

ակտիվների կամ պարտավորությունների նախնական ճանաչման ժամանակ և ազդեցություն չունի հաշվապահական կամ հարկման նպատակով հաշվարկվող շահույթի վրա:

Հետաձգված հարկային ակտիվը ճանաչվում է միայն այն չափով, որքանով հավանական է, որ ապագայում առկա կլինի հարկման ենթակա շահույթ, որի հաշվին կարող են օգտագործվել ժամանակավոր տարբերությունները: Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվարկվում են այն հարկային դրույքով, որը ենթադրվում է, որ կգործի ակտիվների իրացման և պարտավորությունների մարման ժամանակ՝ հիմնվելով տվյալ ժամանակաշրջանի կամ հաշվետու ժամանակաշրջանի փաստացի գործող դրույքների վրա:

Հետաձգված շահութահարկը առաջանում է այն ժամանակավոր տարբերությունների գծով, ինչպիսիք են դուստր, ասոցիացված կամ համատեղ ձեռնարկություններում ներդրումներից առաջացողները, բացի այն դեպքերից, երբ ժամանակավոր տարբերությունների հակադարձման ժամկետները կառավարելի են և, հավանական է, որ ժամանակավոր տարբերությունները մոտ ապագայում չեն հակադարձվի:

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցներն ու դրանց համարժեքները ներառում են կանխիկ դրամը և հաշիվները բանկերում, որոնք կարճ ժամանակահատվածում կարող են փոխարկվել կանխիկ դրամի, և արժեքի փոփոխման չնչին ռիսկ են պարունակում:

Դրամական միջոցներն ու դրանց համարժեքները հաշվառվում են ամորտիզացված արժեքով:

Հաշիվներ բանկերում

Իր բնականոն գործունեության ընթացքում Ընկերությունն օգտագործում է բանկերում բացված ընթացիկ կամ տարբեր ժամկետներով ավանդային հաշիվները: Ֆիքսված ժամկետով ավանդները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Այն միջոցները, որոնք չունեն ֆիքսված ժամկետներ, ամորտիզացվում են ղեկավարության կողմից գնահատված ժամկետներում:

Ֆինանսական գործիքներ

Ընկերությունը ֆինանսական ակտիվը կամ պարտավորությունը հաշվեկշռում ճանաչում է այն ժամանակ, երբ այն դառնում է գործիքի պայմանագրային կողմ: Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների սովորական առուվաճառքի դեպքում դրանք ճանաչվում են գործարքի օրվա դրությամբ: Սովորական ճանապարհով ձեռք բերված ֆինանսական գործիքները, որոնք հետագայում պետք է հաշվառվեն իրական արժեքով, գործարքի օրվա և պայմանագրի օրվա միջև ընկած ժամանակահատվածում հաշվառվում են նույն եղանակով, որով հաշվառվում են ձեռք բերված գործիքները:

Սկզբնական ճանաչման ժամանակ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները չափվում են իրական արժեքով՝ գումարած, ներդրումների դեպքում, գործարքին անմիջապես վերագրելի ծախսերը, բացառությամբ ֆինանսական արդյունքներում ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող ներդրումները:

Սկզբնական ճանաչումից հետո, ֆինանսական արդյունքներում իրական արժեքով հաշվառվող ֆինանսական պարտավորություններին չվերաբերող բոլոր ֆինանսական պարտավորությունները (ներառյալ վաճառքի համար պահվողները) չափվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Սկբնական ճանաչումից հետո ֆինանսական արդյունքներում իրական արժեքով հաշվառվող ֆինանսական պարտավորությունները հետագայում հաշվառվում են իրական արժեքով:

Ընկերությունը իր ֆինանսական ակտիվները դասակարգել է ըստ հետևյալ դասերի՝ վարկեր և դեբիտորական պարտքեր, ֆինանսական արդյունքներում իրական արժեքով հաշվառվող ֆինանսական գործիքներ, վաճառքի համար մատչելի ֆինանսական գործիքներ և մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ: Ներդրումների դասակարգումը ըստ դասերի իրականացվում է ձեռք բերման պահին՝ առաջնորդվելով ղեկավարության կողմից հաստատված կանոններով: Սկզբնական ճանաչումից հետո Ընկերությունը կարող է հնարավորության և

անհրաժեշտության դեպքում, վերադասակարգել իր ֆինանսական ակտիվները յուրաքանչյուր ֆինանսական տարվա վերջում:

ՖՀՄՍ 9 <<Ֆինանսական գործիքներ>> ստանդարտն ուժի մեջ է մտել 2018թ. հունվարի 1-ին և կիրառելի է այդ ամսաթվից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար: Ընկերությունը կիրառել է նոր ստանդարտը՝ ճանաչելով անցման կուտակային ազդեցությունը հաշվետու տարվա սկզբի չբաշխված շահույթում և առանց համեմատական տեղեկատվությունը վերահաշվարկելու:

Վարկեր և դեբիտորական պարտքեր

Վարկերը և դեբիտորական պարտքերը ֆիքսված կամ որոշելի վճարումներով ֆինանսական ակտիվներ են, որոնք առաջանում են, երբ Ընկերությունը անմիջապես միջոցներ է տրամադրում պարտապանին՝ առանց դեբիտորական պարտքը վաճառելու մտադրության:

Հետագայում վարկի հաշվեկշռային արժեքը որոշվում է օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Հաճախորդներին տրամադրված վարկերը, որոնք չունեն մարման հաստատուն ժամկետներ, հաշվառվում են ակնկալվող մարման ժամկետի վրա հիմնված արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով: Հաճախորդներին տրված վարկերի գումարները նվազեցվում են դրանց գծով արժեզրկման կորուստների պահուստներով:

Իրական արժեքով վերաչափվող այլ համապարփակ եկամուտներով հաշվառվող ֆինանսական գործիքներ

Իրական արժեքով վերաչափվող այլ համապարփակ եկամուտներով հաշվառվող ներդրումները հանդիսանում են պարտքային և կապիտալի գործիքներ, որոնք Ընկերությունը մտադրություն ունի պահել անորոշ ժամանակով, որոնք կարող են վաճառվել՝ ելնելով իրացվելիության կամ տոկոսադրույքների, փոխարժեքի կամ կապիտալի գների փոփոխման պահանջներից: Սկզբնական գնահատումից հետո վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվները չափվում են իրական արժեքով, որի փոփոխությունից առաջացող շահույթը կամ վնասը ճանաչվում է որպես կապիտալի առանձին բաղադրիչ՝ մինչև ներդրումի ապաճանաչումը կամ դրա արժեզրկման ճանաչումը, որի դեպքում նախկինում կապիտալում ճանաչված շահույթի կամ վնասի ընդհանուր գումարը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Այնուամենայնիվ, արդյունավետ սոկոսադրույքի մեթոդով հաշվարկված տոկոսագումարները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Վաճառքի համար մատչելի կապիտալի գործիքներից շահաբաժինները ճանաչվում են եկամուտների ու ծախսերի մասին հաշվետվությունում, Ընկերության՝ վճարումները ստանալու իրավունքի հաստատման պահից:

Կազմակերպված ֆինանսական շուկաներում ակտիվորեն շրջանառվող ներդրումների իրական արժեքը որոշվում է բորսայում հաշվեկշռի օրվա դրությամբ փակման պահին տվյալ ակտիվի գծով գնանշված գնով: Ակտիվ շուկա չունեցող ներդրումների իրական արժեքը որոշվում է օգտագործելով գնահատման մեթոդները:

Նման մեթոդները ներառում են՝ 'պարզած ձեռքի' սկզբունքով շուկայական գործառնությունները, հղումները այլ գործիքների ընթացիկ շուկայական արժեքներին, որոնք էականորեն նույնն են, և դիսկոնտավորված դրամական հոսքերի վերլուծությունը: Այլապես ներդրումները հաշվառվում են ինքնարժեքով՝ հանած արժեզրկման համար որևէ հատկացում:

Ֆինանսական ակտիվների արժեզրկում

Գնահատում, թե արդյո՞ք ֆինանսական ակտիվի պարտքային ռիսկն էականորեն աճել է սկզբնական ճանաչումից հետո, միևնույն պարտքային ռիսկի բնութագիր ունեցող ակտիվների խմբավորումը, սպասվելիք պարտքային վնասի գնահատումը՝ այդ թվում ապագայի կանխատեսմանը վերաբերող տեղեկատվության օգտագործմամբ:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ակտիվներ

Ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական ակտիվների խումբը համարվում է արժեզրկված, և արժեզրկման վնասը ճանաչվում է այն ժամանակ, երբ գոյություն ունի ակտիվի սկզբնական ճանաչմանը հաջորդող

իրադարձությունների ('ծախսային իրադարձությունների') արդյունքում առաջացած արժեզրկման օբյեկտիվ վկայություն, և այդ ծախսային իրադարձությունը (իրադարձությունները) ազդեցություն ունի ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական ակտիվների խմբի ապագա դրամական հոսքերի վրա, որոնք հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

Արժեզրկման օբյեկտիվ վկայության որոշման համար օգտագործվող չափանիշներից են՝ պարտապանի կամ պարտապանների խմբի էական ֆինանսական դժվարությունների մասին վկայող ցուցանիշները (օրինակ՝ սեփական միջոցների գործակիցը, զուտ եկամուտ/վաճառք գործակիցը), տոկոսների և մայր գումարի վճարման պարտավորությունների, վարկային համաձայնության կամ այլ պայմանների խախտումները, գրավի արժեքի նվազումը, սնանկացման կամ ֆինանսական այլ վերակազմավորման հավանականությունը, և երբ տեսանելի տվյալները վկայում են չափելի նվազման մասին ակնկալվող ապագա դրամական հոսքերում, ինչպիսիք են փոփոխությունները պարտավորություններում կամ տնտեսական պայմաններում, որոնց վերագրվում են թերացումները:

Ընկերությունը նախ գնահատում է արժեզրկման օբյեկտիվ վկայության առկայությունը անհատական ֆինանսական ակտիվների համար, որոնք առանձնապես նշանակալի են, և անհատական կամ խմբային ֆինանսական ակտիվների համար, որոնք առանձնապես նշանակալի չեն: Եթե պարզվել է, որ գոյություն չունի արժեզրկման օբյեկտիվ վկայություն անհատապես գնահատված ֆինանսական ակտիվի համար՝ անկախ էականության աստիճանից, ապա ակտիվը ներառվում է նույնանման վարկային ռիսկ ունեցող ֆինանսական ակտիվների խմբի մեջ, և ֆինանսական ակտիվների այդ խումբը ենթարկվում է խմբային գնահատման: Այն ակտիվները, որոնք անհատականորեն են ենթարկվում արժեզրկման գնահատմանը, և որոնց գծով արժեզրկումը ճանաչվել է կամ շարունակում է ճանաչվել, չեն ներառվում արժեզրկման խմբային գնահատման մեջ:

Եթե գոյություն ունի ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվի արժեզրկման վնասի օբյեկտիվ վկայություն, ապա վնասի գումարը չափվում է որպես ակտիվի հաշվեկշռային արժեքի և գնահատված այն ապագա դրամական հոսքերի իրական արժեքի միջև տարբերությունը (բացառությամբ վարկի հետ կապված ապագա ծախսերի), որոնք զեղչվել են՝ օգտագործելով ֆինանսական ակտիվի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքը (այսինքն, սկզբնական ճանաչման ժամանակ հաշվարկված արդյունավետ տոկոսադրույքը): Ակտիվի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է պահուստի հաշվի միջոցով: Վնասի գումարը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Եթե վարկը կամ մինչև մարումը պահվող ներդրումը ունի փոփոխուն տոկոսադրույք, ապա արժեզրկման ցանկացած վնասի զեղչման դրույքը պայմանագրով որոշված ընթացիկ արդյունավետ տոկոսադրույքն է: Ընկերությունը կարող է չափել արժեզրկման վնասը գործիքի իրական արժեքի հիման վրա՝ օգտագործելով տեսանելի շուկայական գինը:

Գրավով ապահովված ֆինանսական ակտիվի ակնկալվող ապագա դրամական հոսքերի ներկա արժեքը արտահայտում է գրավի իրացումից առաջացած դրամական հոսքերը՝ հանած գրավի ձեռք բերման և վաճառքի հետ կապված ծախսերը, անկախ գրավի իրացման հավանականությունից:

Արժեզրկման խմբային գնահատման նպատակով, Ֆինանսական ակտիվները խմբավորվում են Կազմակերպության՝ վարկային դասակարգման ներքին համակարգի հիման վրա, որը հաշվի է առնում վարկային ռիսկի այնպիսի բնորոշիչները, ինչպիսիք են ակտիվի տեսակը, արդյունաբերության ոլորտը, աշխարհագրական դիրքը, գրավի տեսակը, ժամկետային կարգավիճակը և այլ նմանատիպ գործոններ:

Ակտիվների խմբերի ապագա դրամական հոսքերի փոփոխությունների գնահատումը պետք է արտահայտի և համապատասխանի տեսանելի կապակցված տվյալների փոփոխություններին (օրինակ՝ փոփոխություններ գործազրկության դրույքներում, գույքի գներում, վճարման կարգավիճակում, կամ խմբում արժեզրկումը մատնանշող այլ գործոններում կամ դրանց ծավալներում): Ապագա դրամական հոսքերի գնահատման համար օգտագործվող մեթոդոլոգիան և վարկածները անընդհատ վերանայվում են Կազմակերպության կողմից, որպեսզի նվազեցվի գնահատված և իրական վնասների միջև եղած տարբերությունները:

Վարկերը՝ կապակցված պահուստների հետ մեկտեղ, դուրս են գրվում, երբ գոյություն չունի ապագայում վարկի հավաքագրելու իրատեսական հեռանկար, և բոլոր գրավներն իրացվել են կամ փոխանցվել Կազմակերպությանը: Եթե հաջորդող տարում գնահատված արժեզրկման վնասի գումարը ավելանում կամ

նվազում է արժեզրկման ճանաչմանը հաջորդող իրադարձությունների արդյունքում, ապա նախկինում ճանաչված արժեզրկման վնասը ավելացվում կամ նվազեցվում է պահուստային հաշիվը ճշգրտելու միջոցով: Եթե ապագա դուրս գրումը հետագայում վերականգնվում է, ապա վերականգնված գումարը կրեդիտագրվում է պահուստի հաշվին:

Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների ապաճանաչում

Ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվը (կամ ֆինանսական ակտիվի մի մասը կամ նմանատիպ ֆինանսական ակտիվների խմբի մի մասը) ապաճանաչվում է, երբ.

- լրացել է ակտիվից դրամական հոսքեր ստանալու իրավունքը
- Ընկերությունը փոխանցել է ակտիվից դրամական հոսքեր ստանալու պահանջի իրավունքը, կամ պահպանել է այդ իրավունքը, բայց պարտավորվում է ստացված գումարներն ամբողջությամբ և ժամանակին փոխանցել երրորդ կողմին՝ համաձայն փոխանցման համաձայնագրի, և
- Ընկերությունը (ա) փոխանցել է ակտիվի գծով բոլոր ռիսկերի և օգուտների զգալի մասը, կամ (բ) չի փոխանցել և չի պահպանել ակտիվի գծով բոլոր ռիսկերի և օգուտների զգալի մասը, սակայն փոխանցել է ակտիվի նկատմամբ վերահսկողությունը:

Եթե Ընկերությունը փոխանցել է ակտիվից դրամական հոսքեր ստանալու իրավունքը և չի փոխանցել ու չի պահպանել ակտիվի գծով բոլոր ռիսկերի և օգուտների զգալի մասը, ինչպես նաև չի փոխանցել ակտիվի նկատմամբ վերահսկողությունը, ապա ակտիվը ճանաչվում է մինչև Կազմակերպության՝ ֆինանսական ակտիվում շարունակական մասնակցությունը: Փոխանցվող ակտիվի երաշխիքային ապահովման ձև ստացած շարունակական մասնակցությունը որոշվում է

հետևյալ երկու մեծություններից նվազագույնով՝ ակտիվի սկզբնական հաշվեկշռային արժեքը կամ փոխհատուցման վճարվելիք գումարը, որ Կազմակերպությունից կարող է պահանջվել:

Ֆինանսական պարտավորություններ

Ֆինանսական պարտավորությունը ապաճանաչվում է այն ժամանակ, երբ այն մարվում կամ չեղյալ է համարվում, կամ լրանում է դրա ուժի մեջ մնալու ժամկետը:

Երբ գոյություն ունեցող ֆինանսական պարտավորությունը փոխարինվում է էականորեն տարբերվող պայմաններով, բայց միևնույն փոխառուին վերաբերող պարտավորությամբ, կամ էականորեն փոփոխվում են գոյություն ունեցող պարտավորության պայմանները, նման փոխանակումը կամ փոփոխությունը պետք է հանգեցնի սկզբնական պարտավորության ապաճանաչման և նորպարտավորության ճանաչման, իսկ համապատասխան հաշվեկռային արժեքների տարբերությունը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները հաշվառվում են պատմական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը: Եթե հիմնական միջոցի փոխհատուցվող գումարը փոքր է դրա հաշվեկշռային արժեքից, ապա ժամանակավոր չհամարվող պայմանների արդյունքում, համապատասխան ակտիվը նվազեցվում է մինչև այդ փոխհատուցվող արժեքը:

Մաշվածությունը հաշվարկվում է գծային մեթոդով, որի հիմքում ընկած է ակտիվի օգտակար ծառայության ժամկետը: Կիրառվել են մաշվածության հետևյալ տարեկան դրույքաչափերը՝

Օգտակար ծառայության ժամկետ (ամիս)	
Շենքեր	240
Համակարգիչներ	12
Փոխադրամիջոցներ	96
Այլ հիմնական միջոցներ	96
Մինչև 50 հազ.դրամ արժող. հիմնական միջոցներ	12

Հիմնական միջոցների վերանորոգման և պահպանման ծախսերը ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում այն ժամանակահատվածում, որում դրանք տեղի են ունեցել: Կապիտալ բնույթի վերանորոգման ծախսերը ներառվում են ակտիվի հաշվեկշռային արժեքի մեջ, երբ հավանական է, որ դրանց շնորհիվ առաջացած ապագա տնտեսական օգուտները՝ ավելի շատ, քան ակնկալվում էր ակտիվի նորմատիվային ցուցանիշների սկզբնական գնահատումից կիոսեն դեպի Ընկերություն: Կապիտալ վերանորոգումների մաշվածությունը հաշվարկվում է համապատասխան ակտիվի մնացորդային օգտակար ծառայության ընթացքում:

Հիմնական միջոցների օտարումից ծախսերը և եկամուտները որոշվում են՝ համեմատելով ակտիվի օտարումից զուտ մուտքերն ու հաշվեկշռային արժեքը և ներառվում են գործառնական եկամտի մեջ:

Երբ վաճառվում են վերագնահատված ակտիվները, օտարված ակտիվին վերագրելի և վերագնահատման պահուստում ներառված գումարները վերագրվում են չբաշխված շահույթին:

Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները ներառում են համակարգչային ծրագրերը:

Առանձին ձեռք բերված ոչ նյութական ակտվիները սկզբնական ճանաչման ժամանակ չափվում են ինքնարժեքով: Սկզբնական ճանաչումից հետո ոչ նյութական ակտվիները հաշվառվում են ինքնարժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և ցանկացած կուտակված արժեզրկման ծախս:

Ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության ժամկետները կարող են լինել որոշակի և անորոշ: Որոշելի օգտակար ծառայության ժամկետ ունեցողները ամորտիզացվում են գծային մեթոդով 10 տարվա ընթացքում և գնահատվում են արժեզրկման համար, երբ առկա են արժեզրկման հատկանիշները: Որոշելի օգտակար ծառայության ժամկետ ունեցող ակտիվների ամորտիզացիայի ժամանակահատվածներն ու մեթոդները վերանայվում են առնվազն յուրաքանչյուր ֆինանսական տարվա վերջին:

Օգտակար ծառայության անորոշ ժամկետ ունեցող ոչ նյութական ակտիվները չեն ամորտիզացվում, բայց տարին մեկ անգամ ստուգվում են արժեզրկման համար անհատական կամ դրամային միջոցներ ստեղծող միավորի մակարդակով: Օգտակար ծառայության անորոշ ժամկետ ունեցող ակտիվի օգտակար ծառայության ժամկետը վերանայվում է յուրաքանչյուր տարի՝ պարզելու համար, թե արդյո՞ք ակտիվի օգտակար ծառայության ժամկետը դեռևս անորոշ է գնահատվում:

Համակարգչային ծրագրերի պահպանմանը վերագրելի ծախսերը ծախս են ճանաչվում առաջացման պահին:

Վարձակալություն

Վարձակալության պայմանագրով (որի շրջանակներում Ընկերությունը հանդես է գալիս որպես վարձակալ) վարձակալության ժամկետի սահմանում, ներառյալ այն, թե արդյոք Ընկերությունը ողջամտորեն մտադիր է կիրառել վարձակալի ընտրելու հնարավորությունը, և վարձակալության գծով պարտավորությունները չափելու համար օգտագործվող լրացուցիչ փոխառության տոկոսադրույքի որոշում:

Փոխառություններ

Փոխառությունները, որոնք ներառում են այլ ֆինանսական կազմակերպությունների և հիմնադիր կողմի նկատմամբ պարտավորությունները, սկզբնապես ճանաչվում են ստացված զուտ մուտքերի իրական արժեքով՝ հանած անմիջապես վերագրելի գործառնական ծախսերը: Սկզբնական գնահատումից հետո փոխառություններն հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Շահույթը կամ վնասը ճանաչվում է ֆինանսական արդյունքերի մասին հաշվետվությունում այն ժամանակ, երբ ապաճանաչվում են պարտավորությունները, ինչպես նաև ամորտիզացիոն ընթացակարգի միջոցով:

Պահուստներ, պայմանական ակտիվներ և պարտավորություններ

Պահուստը դա անորոշ ժամկետով պարտավորություն է: Պահուստը ճանաչվում է այն ժամանակ, երբ Ընկերությունն անցյալ դեպքերի արդյունքում ունի իրավական կամ կառուցողական պարտավորություն և, հավանական է, որ պարտավորության մարումը կպահանջի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք և հնարավոր կլինի պարտավորության գումարը արժանահավատորեն գնահատել:Եթե նշված պայմանները չեն բավարարվում, ապա Ընկերությունը պահուստ չի ձևավորում: Որպես պահուստ ճանաչված գումարը պետք է իրենից ներկայացնի հաշվեկշռի ամսաթվի դրությամբ ներկա պարտականությունը մարելու համար պահանջվող ծախսումների լավագույն գնահատականը: Պահուստին վերաբերվող ծախսը ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում կարող է ներկայացվել զուտ հիմունքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ պահուստները պետք է վերանայվեն և ճշգրտվեն՝ արտացոլելու համար ընթացիկ լավագույն գնահատականը: Եթե այլևս հավանական չէ, որ պարտավորությունը մարելու համար կպահանջվի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք,ապա պահուստը պետք է հակադարձվի: Պահուստը պետք է օգտագործվի միայն այն ծախսումների դիմաց, որոնց գծով այդ պահուստը սկզբնապես ճանաչվել էր:

Պայմանական պարտավորությունը դա հնարավոր պարտականություն է որպես անցյալ դեպքերի արդյունք, որի գոյությունը հաստատվելու է միայն մեկ կամ ավելի ապագա անորոշ դեպքերի տեղի ունենալով կամ չունենալով, որոնք ամբողջովին չեն վերահսկվում Ընկերության կողմից, կամ ներկա պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, որը սակայն չի ճանաչվում հետևյալ պատճառներով.

- հավանական չէ, որ այդ պարտավորությունը մարելու համար կպահանջվի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք, կամ
- պարտականության գումարը չի կարող չափվել բավարար արժանահավատությամբ:

Պայմանական ակտիվը դա հնարավոր ակտիվ է որպես անցյալ դեպքերի արդյունք, որի գոյությունը հաստատվելու է միայն մեկ կամ ավելի ապագա անորոշ դեպքերի տեղի ունենալով կամ չունենալով, որոնք ամբողջովին չեն վերահսկվում Ընկերության կողմից:

Պայմանական պարտավորությունները չեն ճանաչվում ֆինանսական հաշվետվություններում, այլ բացահայտվում են ծանոթագրություններում: Սակայն եթե դրանց մարման նպատակով տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսքի հնարավորությունը շատ փոքր է, ապա պայմանական պարտավորությունները չեն բացահայտվում:

Շահաբաժիններ

Շահաբաժինները ճանաչվում են որպես պարտավորություն և հաշվեկշռային ամսաթվի դրությամբ նվազեցվում են կապիտալից միայն այն դեպքում, եթե դրանք հայտարարվել են մինչև հաշվեկշռային ամսաթիվը կամ այդ ամսաթվին: Շահաբաժինները բացահայտվում են, երբ դրանք առաջարկվում են մինչև հաշվեկշռային ամսաթիվը, կամ առաջարկվում կամ հայտարարվում են հաշվեկշռային ամսաթվից հետո, բայց մինչև ֆինանսական հաշվետվությունների հաստատումը հրապարակման համար:

Հետաձգված հարկեր

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները ճանաչվում են, երբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված ակտիվների կամ պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և դրանց համապատասխան հարկային բազաների միջև առկա են տարբերություններ, բացառությամբ, եթե դրանք առաջանում են.

- գուդվիլի սկզբնական ճանաչումից,
- ձեռնարկատիրական գործունեության միավորում չհանդիսացող գործարքի արդյունքում ակտիվների և պարտավորությունների սկզբնական ճանաչումից և գործարքի ամսաթվի դրությամբ չեն ազդում ոչ հարկվող շահույթի, և ո՛չ էլ հաշվապահական շահույթի վրա,
- դուստր կազմակերպություններում և համատեղ վերահսկվող կազմակերպություններում ներդրումներից, որի դեպքում Ընկերությունն ի վիճակի է վերահսկել տարբերությունների հակադարձումը, և հավանական է, որ տարբերությունները չեն հակադարձվի տեսանելի ապագայում:

Հետաձգված հարկային ակտիվների ճանաչումը սահմանափակվում է այն դեպքում, երբ հավանական չէ, որ կառաջանա հարկվող շահույթ, որի դիմաց ժամանակավոր տարբերությունները հնարավոր կլինի օգտագործել:

Հետաձգված հարկային ակտիվները կամ պարտավորությունները չափում են՝ կիրառելով հարկային դրույքաչափերը, որոնք ակնկալվում է, որ կկիրառվեն, երբ հետաձգված հարկային պարտավորությունները/(ակտիվները) կմարվեն/(կփոխհատուցվեն):

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են, եթե կա ընթացիկ հարկային ակտիվներն ու պարտավորությունները հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք, և հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները վերաբերում են հարկերին, որոնք գանձվում են նույն հարկային մարմնի կողմից:

Հաշվանցում

Ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները, եկամուտներն ու ծախսերը հաշվանցվում են և զուտ գումարը արտացոլվում է հաշվեկշռում, եթե գոյություն ունի ճանաչված գումարների հաշվանցման օրենսդրորեն հաստատված իրավունք, և առկա է զուտ գումարների հիման վրա հաշվանցման կամ ակտիվի իրացման ու միաժամանակ պարտավորության մարման մտադրություն:

Փոխկապակցված կողմերի հետ գործառնություններ

Ընկերությունն իր գործունեության ընթացքում իրականացնում է գործառնություններ փոխկապակցված կողմերի հետ: Նշված գործառնությունները հիմնականում իրականացվում են շուկայական գներով: Գործող շուկայի բացակայության դեպքում շուկայական կամ ոչ շուկայական տոկոսադրույքների կիրառումը որոշվում է դատողությունների հիման վրա: Դատողությունները հիմնվում են այլ հաճախորդների հետ նմանատիպ գործառնությունների, ինչպես նաև արդյունավետ դրույքների վերլուծությունների վրա:

Ընկերության համար կապակցված կողմեր են՝

1. կազմակերպությունները, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն վերահսկում են Ընկերությանը կամ վերահսկվում նրա կողմից, կամ Ընկերության հետ ընդհանուր վերահսկողության տակ են գտնվում,
2. ասոցիացված կազմակերպությունները
3. համատեղ վերահսկվող միավորները
4. քաղաքացիները(ներառյալ՝դրանց ընտանիքի մտերիմ անդամները), որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն Ընկերությունում ունեն այնքան ձայնի իրավունք, որը նրանց կազմակերպության վրա նշանակալի ազդեցության հնարավորություն է տալիս,
5. հանգուցային կառավարչական անձնակազմը, այսինքն այն անձինք, որոնք իրավասու են և պատասխանատվություն են կրում հաշվետու կազմակերպության գործունեության պլանավորման, կառավարման և վերահսկողության իրականացման համար, ներառյալ կազմակերպությունների տնօրենները, պաշտոնատար անձինք և նրանց ընտանիքի մտերիմ անդամները,
6. կազմակերպությունները, որոնցում զգալի քանակությամբ ձայների իրավունքն ուղղակիորեն կամ անուղղակիորեն պատկանում է «4» և «5» կետերում նկարագրված ցանկացած անձի, կամ որոնց վրա այդպիսի անձինք ունեն նշանակալի ազդեցություն: Դրանցից են այն կազմակերպությունները, որոնք պատկանում են հաշվետու կազմակերպության տնօրեններին կամ խոշոր բաժնետերերին, և այն կազմակերպությունները, որոնք հաշվետու կազմակերպության հետ ունեն հանգուցային կառավարչական անձնակազմի ընդհանուր անդամ:

Էական սխալներ և փոփոխություններ հաշվապահական հաշվառման քաղաքականություն մեջ

Մեկ կամ ավելի նախորդ ժամանակաշրջանների ֆինանսական հաշվետվությունների կազմման ժամանակ թույլ տված և հաշվետու ժամանակաշրջանում հայտնաբերված սխալները, որոնք հետևանք են թվաբանական անճշտությունների, հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ընթացքում թույլ տված սխալների, փաստերի ոչ ճիշտ մեկնաբանման, խաբեության կամ անփութության, ենթակա են ուղղման, որպես կանոն, հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական հաշետվություններում: Թույլ տված այն սխալները, որոնք ունեն այնպիսի նշանակալի հետևանքներ նախորդ ժամանակաշրջանների ֆինանսական հաշվետվությունների վրա, որ դրանք չեն կարող այլևս արժանահավատ համարվել, համարվում են էական սխալներ:

Ընկերությունն ուղղում է նախորդ ժամանակաշրջանի էական սխալները հետընթաց՝ դրանց հայտնաբերումից հետո հրապարակման համար հաստատված առաջին ֆինանսական հաշվետվությունների փաթեթում:

Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխության դեպքում

- Ընկերությունը հաշվառում է ՖՀՄՍ-ի առաջին կիրառման արդյունքում առաջացող հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունը տվյալ ՖՀՄՍ-ի կոնկրետ անցումային դրույթների համաձայն (եթե այդպիսիք կան)
- Երբ Ընկերությունը փոխում է հաշվապահական հաշվառման քաղաքականությունը՝ կապված որևէ ՖՀՄՍ-ի առաջին անգամ կիրառման հետ, որը չի ներառում այդ փոփոխությանը վերաբերող կոնկրետ անցումային դրույթներ, ապա Ընկերությունը այդ փոփոխությունը կիրառում է հետընթաց:

Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող դեպքեր

Հաշվետու ժամանակաշրջանի վերջից հետո տեղի ունեցող դեպքերն այն բարենպաստ և ոչ բարենպաստ դեպքերն են, որոնք տեղի են ունենում հաշվապահական հաշվետու ժամանակաշրջանի վերջի և այն ամսաթվի միջև ընկած ժամանակաշրջանում, երբ ֆինանսական հաշվետվությունները վավերացվում (ստորագրվում) են

ներկայացնելու (օրենսդրությամբ սահմանված հասցեներով) համար:

Ընկերությունը ճշգրտում է իր ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարները՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջից հետո տեղի ունեցած ճշգրտող դեպքերն արտացոլելու նպատակով /դեպքեր, որոնք հաստատում են հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գոյություն ունեցող պայմանները կամ իրավիճակը/:

Եթե էական սխալի գումարը, կախված տվյալ գործարքի կամ հոդվածի չափից և բնույթից, չի գերազանցում Ընկերության հաշվեկշռային ակտիվների հանրագումարի մեկ տոկոսը, և եթե այդ տեղեկատվության բացահայտելը չի ազդելու օգտագործողների կողմից ֆինանսական հաշվետվությունների տվյալների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա, ապա նախորդ տարվա վերջին օրվա ամսաթվով կազմված ֆինանսական դրության մասին հաշվետվության մեջ փոփոխություններ չեն կատարվում:

Ընկերությունը չի ճշգրտում իր ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարները՝հաշվետու ժամանակաշրջանի վերջից հետո տեղի ունեցած չճշգրտող դեպքերն արտացոլելու նպատակով/դեպքեր, որոնք ցույց են տալիս հաշվետու ժամանակաշրջանի վերջից հետո առաջացած պայմանները կամ իրավիճակը/:

Եթե սեփական կապիտալի գործիքներ տիրապետողների շահաբաժինները առաջադրված կամ հայտարարված են հաշվետու ժամանականշրջանի վերջից հետո, Ընկերությունը չի ճանաչում այդ շահաբաժինները որպես պարտավորություն՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ:

Վարկերի և դեբիտորական պարտքերի գծով արժեզրկման պահուստներ

Յուրաքանչյուր հաշվետու ամսվա շաբաթվա վերջին Ընկերությունը վերանայում է իր խնդրահարույց վարկերն ու փոխատվությունները՝ որոշելու համար, թե արդյո՞ք արժեզրկման պահուստ պետք է նախատեսվի ֆինանսական արդյունքերի մասին հաշվետվությունում: Մասնավորապես, ղեկավարության դատողությունն անհրաժեշտ է ապագա դրամական հոսքերի գումարը և պարբերականությունը գնահատելու համար, երբ անհրաժեշտ է որոշել պահանջվող պահուստի չափը: Նման գնահատումները հիմնված են մի շարք գործոնների վերաբերյալ ենթադրությունների վրա, և իրական արժեքները կարող են տարբերվել, որը կհանգեցնի պահուստի գումարի հետագա փոփոխությունների:

Առանձնապես նշանակալի վարկերի և փոխատվությունների համար ստեղծված հատուկ պահուստից բացի, Ընկերությունը ստեղծում է նաև արժեզրկման խմբային պահուստներ այն ռիսկերի գծով, որոնք չնայած որ անհատապես չեն գնահատվել, սակայն պարունակում են չվճարման ավելի մեծ ռիսկ, քան սկզբնապես որոշվել էր: Հաշվի է առնում այնպիսի գործոններ, ինչպիսիք են ցուցանիշների վատթարացումը երկրի ռիսկում, արդյունաբերության մեջ, տեխնոլոգիական հնացումը, ինչպես նաև բացահայտված կառուցվածքային թուլությունները կամ դրամական հոսքերի նվազումը:

3. Տոկոսային և նմանատիպ եկամուտներ

Հ/Հ	Անվանումը	2023թ.	2022թ.
1	Տոկոսային եկամուտներ բանկային հաշիվներից և ավանդներից,	52	1
3	Տոկոսային եկամուտներ վարկերից և այլ փոխառություններից	406,276	508,047
	Ընդամենը	**406,328**	**508,047**

4. Տոկոսային և նմանատիպ ծախսեր

Հ/Հ	Անվանումը	2023թ.	2022թ.
1	Տոկոսային ծախսեր դրամական շուկայի փոխառությունների դիմաց	(33,478)	(41,614)
2	Տոկոսային ծախսեր ռեզիդենտ բանկերից	(20)	(5)
3	Տոկոսային ծախսեր հաճախորդներից ստացված փոխառությունների դիմաց	(106,003)	(164,855)
4	Ֆինանսական վարձակալության դիմաց վճարված տոկոսներ	(4,014)	(3,987)
	Ընդամենը	**(143,515)**	**(210,461)**

5. Իրական արժեքով՝ այլ համափարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ներդրումներից զուտ շահույթ(վնաս)

Հ/Հ	Անվանումը	2023թ.	2022թ.
1	Իրական արժեքով՝ այլ համափարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ֆինանսական ներդրումներից զուտ շահույթ(վնաս)	0	0
3	**Ընդամենը**	**0**	**0**

6. Արտարժութային գործարքներից ստացված զուտ շահույթ / (վնաս)

Հ/Հ	Անվանումը	2023թ.	2022թ.
1	Արտարժույթի վաճառքից ստացված զուտ շահույթ/(վնաս)	4,649	6,693
2	Արտարժույթի վերագնահատումից ստացված զուտ շահույթ/(վնաս)	8,114	(163,670)
	Ընդամենը	**12,763**	**(156,977)**

7. Այլ գործառնական եկամուտներ

Հ/Հ	Անվանումը	2023թ.	2022թ.
1	Եկամուտներ ստացված տույժերից և տուգանքներից	20,310	112,602
2	Այլ եկամուտներ	8,765	10,815
	Ընդամենը	**29,075**	**123,417**

8. Վարկերի և այլ փոխառություններից առաջացած կորուստներ

Տեղաբաշխված վարկերի գծով պահուստ	2023թ.	2022թ.
Հատկացումներ ակտիվների հնարավոր կորուստների պահուստին /ծախսեր/	(252,123)	(445,292)
Ակտիվների հնարավոր կորուստների պահուստին կատարված մասհանումների վերադարձ /եկամուտ/	391,406	1,031,487
ՖՀՄՍ 9-ի կիրառման հետ կապված արժեզրկման պահուստի ճշգրտում	(55,200)	(86,670)
Ընդամենը	**84,083**	**499,525**

Տեղաբաշխված վարկերի գծով պահուստ	2023թ.	2022թ.
Սկզբնական մնացորդ	**195,564**	**98,547**
ՖՀՄՍ 9-ի կիրառման հետ կապված արժեզրկման պահուստի ճշգրտում	55,200	86,670
պահուստին մասհանումներ	711,626	2,214,617
պահուստի օգտագործում	(742,282)	(2,204,270)
Վերջնական մնացորդ	**220,108**	**195,564**

9. Ընդհանուր վարչական ծախսեր

Հ/Հ	Անվանումը	2023թ.	2022թ.
1	Ծախսեր անձնակազմի գծով	(114,535)	(92,931)
2	Կառավարչական ծախսեր	(35,350)	(35,067)
	Ընդամենը	**(149,885)**	**(127,998)**

10. Այլ գործառնական ծախսեր

Հ/Հ	Անվանումը	2023թ.	2022թ.
1	Վճարված տույժեր և տուգանքներ		
2	Գովազդային և ներկայացուցչական ծախսեր	(7,056)	(12,441)
3	Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն ծախսեր	(21,291)	(21,074)
4	Այլ ծախսեր	(26,880)	(19,206)
	Ընդամենը	**(55,227)**	**(52,721)**

11. Շահութահարկի գծով ծախս/փոխհատուցում

Շահութահարկի դրույքաչափը գործող օրենսդրության համաձայն Հայաստանի Հանրապետությունում 2023թ-ին կազմում է 18% (2022թ-ին նույնպես 18%): Հետաձգված շահութահարկի գումարը ևս հաշվարկվում է 18% հիմնական դրույքաչափը կիրառելով: Ընկերությունը ֆինանսական ակտիվների և պարտավորությունների գծով եկամուտների և ծախսերը հարկային առումով հաշվարկելիս առաջնորդվում է ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ վարկային կազմակերպությունների միությանն ուղղված պարզաբանումով, համաձայն որի ֆինանսական ակտիվների և պարտավորությունների գծով եկամուտների և

ծախսերի ճանաչման համար պետք է հիմք ընդունել վարկերի և փոխառությունների պայմանագրերում ամրագրված անվանական տոկոսադրույքները:

Հազար ՀՀ դրամ	2023թ.	2022թ.
Ընթացիկ հարկի գծով ծախս/(փոխհատուցում)	(48,545)	(62,684)
Հետաձգված հարկի գծով ծախս (փոխհատուցում)	10,686	17,481
Ընդամենը շահութահարկի գծով ծախս	**(37,859)**	**(45,203)**

Հետաձգված հարկային ակտիվների, շահույթում կամ վնասում ճանաչված գումարների և ՖՀՄՍ 9-ի ճշգրտման ազդեցության մանրամասները ներկայացված են ստորև.

2023թ. (հազար դրամ)	**Մնացորդն առ 1 հունվարի 2023**	**Ճանաչվել է շահույթում կամ վնասում**	**Մնացորդն առ 3 1 դեկտեմբերի 2023**
Հաճախորդներին տրված վարկեր	15,600	9,937	25,537
Հիմնական միջոցներ	3,460	400	3,860
Այլ պարտավորություն	2,192	349	2,541
Հետաձգված հարկային ակտիվ/ (պարտավորություն)	**21,252**	**10,686**	**31,938**

2022թ. (հազար դրամ)	**Մնացորդն առ 1 հունվարի 2022**	**Ճանաչվել է շահույթում կամ վնասում**	**Մնացորդն առ 3 1 դեկտեմբերի 2022**
Հաճախորդներին տրված վարկեր	-	15,600	15,600
Հիմնական միջոցներ	-	3,460	3,460
Այլ պարտավորություն	3,771	(1,579)	2,192
Հետաձգված հարկային ակտիվ/ (պարտավորություն)	**3,771**	**17,481**	**21,252**

12. Դրամական միջոցներ և բանկային հաշիվներ

Հ/Հ	Անվանումը	2023թ.	2022թ.
1	Կանխիկ դրամական միջոցներ և դրան հավասարեցված վճարային փաստաթղթեր	30,101	170,325
2	Բանկային հաշիվներ բանկերում	35,036	285,701
3	Տեղաբաշխված բանկային հաշիվների և այլ ավանդների գծով պահուստ	(346)	(2,857)
	Ընդամենը	**64,791**	**453,169**

* Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունում դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի վերջում տողի մնացորդներում ներառված են նաև պահուստները:

13. Դրամական շուկայում այլ տեղաբաշխումներ

Հ/Հ	Անվանումը	2023թ.	2022թ.
1	Ֆինանսական կազմակերպություններում ներդրված ավանդներ	743	1,388
	Ընդամենը	**743**	**1,388**

14. Հաճախորդներին տրված վարկեր և այլ փոխատվություններ

Հ/Հ	Անվանումը	2023թ.	2022թ.
1	Տրամադրված վարկեր և այլ փոխատվություններ	3,807,891	3,541,939
2	Տեղաբաշխված վարկերի գծով պահուստ	(220,108)	(195,564)
	Ընդամենը	**3,587,783**	**3,346,375**

15. Շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ներդրումներ

Հ/Հ	Անվանումը	2023թ.	2022թ.
1	Հայաստանի Հանրապետության պետական արժեթղթեր	–	–
2	Այլ երկրների ոչ պետական արժեթղթեր	19,797	14,996
	Ընդամենը (Գումարը արտացոլված է պահուստով)	**19,797**	**14,996**

16. Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ

Շահագործման մեջ գտնվող ակտիվներ	Շենքեր, շինություններ	Գրասենյակային գույք	Համակարգչային տեխնիկա	Փոխադրամիջոցներ	Այլ հիմնական միջոցներ	Ոչ նյութական ակտիվներ	Օգտագործման իրավունքով ակտիվներ	Ընդամենը
Սկզբնական արժեք								
Առ 31.12.2022թ.	**8,058**	**45,705**	**21,705**	**112,125**	**622**	**6,858**	**54,695**	**249,768**
Ավելացում	7,885	308	1,431	13,843	-	-	-	23,467
Օտարում/դուրսգրում		(316)	-	(7,200)			-	(7,516)
Առ 31.12.2023թ.	**15,943**	**45,697**	**23,136**	**118,768**	**622**	**6,858**	**54,695**	**265,719**
Մաշվածություն								
Առ 31.12.2022թ.	**3,598**	**37,185**	**21,002**	**81,465**	**622**	**6,858**	**18,108**	**168,838**
Մաշվածության ծախս	612	1,945	618	6,589	-	-	4,557	14,321
Օտարում/դուրս գրում		(316)		(7,200)				(7,516)
առ 31.12.2023թ.	**4,210**	**38,814**	**21,620**	**80,854**	**622**	**6,858**	**22,665**	**175,643**
Հաշվեկշռային արժեքն առ 31.12.2022	**4,460**	**8,520**	**703**	**30,660**	**-**	**-**	**36,587**	**80,930**
Հաշվեկշռային արժեքն առ 31.12.2023	**11,733**	**6,883**	**1,516**	**37,914**	**-**	**-**	**32,030**	**90,076**

17. Ստացվելիք տոկոսներ

Հ/Հ	Անվանումը	2023թ.	2022թ.
1	Հաշվեգրված տոկոսներ	19,198	19,940
	Ընդամենը	**19,198**	**19,940**

18. Այլ ակտիվներ

Հ/Հ	Անվանումը	2023թ.	2022թ.
1	Դեբիտորական պարտքեր և կանխավճարներ	19,584	42,505
2	Այլ ակտիվներ (բռնագանձված գույք)	195,930	205,671
	Ընդամենը	**215,514**	**248,176**

19. Բանկերից ստացված փոխառություններ և վարկեր

Հ/Հ	Անվանումը	2023թ.	2022թ.
1	Բանկերից ստացված վարկեր և այլ փոխառություններ	0	0

20. Դրամական շուկայից ստացված այլ փոխառություններ

Հ/Հ	Անվանումը	2023թ.	2022թ.
1	Ֆինանսական կազմակերպություններից ներգրավված փոխառություններ	–	–
2	Ֆինանսական կազմակերպություններից ստացված վարկեր և այլ փոխառություններ՝ Ազգային հիփոթեկային և Բնակարան երիտասարդներից	467,614	564,806

21. Հաճախորդներից ներգրավված փոխառություններ

Հ/Հ	Անվանումը	2023թ.	2022թ.
1	Ներգրավված ցպահանջ փոխառություններ	1,482	1,480
2	Ներգրավված ժամկետային փոխառություններ	1,828,610	2,000,165
	Ընդամենը	**1,830,092**	**2,001,645**

*Ցպահանջ գումարը դա 2023թ. դեկտեմբեր ամսվա չվճարված տոկոսներն են:

22.Վճարվելիք գումարներ

Հ/Հ	Անվանումը	2023թ.	2022թ.
1	Վճարման ենթակա շահաբաժիններ	57	51

23. Այլ պարտավորություններ

Հ/Հ	Անվանումը	2023թ.	2022թ.
1	Կրեդիտորական պարտքեր	97,797	124,884

24. Ակտիվների և պարտավորությունների մարման ժամկետների վերլուծություն

2022թ.

Ակտիվներ	1 ամսից պակաս	1-ից 3 ամիս	3 ամսից 1 տարի	1-ից 3 տարի	3 տարուց ավելի	Ընդամենը
Վարկային ներդրում	596,690	160,322	232,578	611,490	2,050,074	3,651,154

Պարտավո-ություններ	1 ամսից պակաս	1-ից 3 ամիս	3 ամսից 1 տարի	1-ից 3 տարի	3տարուց ավելի	Ընդամենը
Ներգրավված փոխառություններ	252,494	344,965	444,719	1,380,580	316,476	2,739,234

2023թ.

Ակտիվներ	1 ամսից պակաս	1-ից 3 ամիս	3 ամսից 1 տարի	1-ից 3 տարի	3տարուց ավելի	Ընդամենը
Վարկային ներդրում	341,084	52,028	395,403	850,384	2,340,463	3,979,362

Պարտավո-ություններ	1 ամսից պակաս	1-ից 3 ամիս	3 ամսից 1 տարի	1-ից 3 տարի	3տարուց ավելի	Ընդամենը
Պարտավո-ություններ ֆիզիկական անձանց նկատմամբ	128,287	10,886	718,771	161,723	1,397,467	2,417,134

25. Արտարժութային զամբյուղ

Արտարժութային ռիսկը ֆինանսական գործիքի իրական արժեքի կամ դրանից ստացվալ դրամական միջոցների ապագա հոսքերի տատանման ռիսկն է արտարժույթի փոխարժեքների փոփոխության արդյունքում: Ընկերության արտարժութային ռիսկը հիմնականում առաջանում է ԱՄՆ դոլարով ստացված վարկերի հետ կապված փոխարժեքային փոփոխություններից, ինչի արդյունքում Ընկերությունը կարող է կրել նշանակալի վնասներ: Այս ռիսկն, ըստ էության, Ընկերության կողմից չի կառավարվում՝ հաշվի առնելով դրա կառավարման հետ կապված ծախսերը և նման ռիսկերի կառավարման համար անհրաժեշտ գործիքակազմի բացակայությունը:
Դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության զուտ ենթարկվածությունը արտարժութային ռիսկին ներկայացված է ստորև՝

2022թ.

	Դրամ	Ազատ փոխարկելի արտարժույթ	Սահմանա-փակ փոխարկելի արտարժույթ	Ընդամենը
Ակտիվներ	1,384,860	2,841,022		4,225,882
Պարտավորություններ	698,611	2,021,428		2,720,039
Զուտ արտարժութային դիրք		**(819,594)**		

2023թ.

	Դրամ	Ազատ փոխարկելի արտարժույթ	Սահմանա-փակ փոխարկելի արտարժույթ	Ընդամենը
Ակտիվներ	1,262,995	2,799,541		4,062,536
Պարտավորություններ	577,272	1,830,087		2,407,359
Զուտ արտարժութային դիրք		**(969,454)**		

26. Տոկոսադրույքի ռիսկ

Տոկոսադրույքի ռիսկը ֆինանսական գործիքի իրական արժեքի կամ դրանից ստացվող դրամական միջոցների ապագա հոսքերի տատանման ռիսկն է շուկայական տոկոսադրուքների փոփոխության արդյունքում: Ընկերությունը ենթարկվում է իր ֆինանսական վիճակի և դրամական միջոցների հոսքերի գերակայող շուկայական տոկոսադրույքների տատանումների ազդեցությանը: Նման տատանումները կարող են ավելացնել տոկոսային մարժան, սակայն կարող են նաև նվազեցնել կամ հանգեցնել վնասների՝ տոկոսադրույքների անսպասելի փոփոխության դեպքում:

2023թ.

	մինչև 1 ամիս		**1-3 ամիս**		**3 ամսից 1 տարի**		**1 տարուց ավելի**	
	նախորդ տարի	ընթացիկ տարի	նախորդ տարի	ընթացիկ տարի	նախորդ տարի	ընթացիկ տարի	նախորդ տարի	ընթացիկ տարի
Ներգրավված միջոցներ								
Դրամով	4,221	119,932	17,606	10,866	60,533	67,571	594,170	389,152
Արտարժույթով	73,835	8,355		20	530,660	651,200	1,980,890	1,170,038
Տեղաբաշխված միջոցներ								
Դրամով	38,410	88,691	14,231	18,751	158,625	157,448	1,020,877	915,405
Արտարժույթով	299,601	252,393	51,691	33,277	140,707	237,955	1,996,397	2,275,442

2022թ.

	մինչև 1 ամիս		**1-3 ամիս**		**3 ամսից 1 տարի**		**1 տարուց ավելի**	
	նախորդ տարի	ընթացիկ տարի	նախորդ տարի	ընթացիկ տարի	նախորդ տարի	ընթացիկ տարի	նախորդ տարի	ընթացիկ տարի
Ներգրավված միջոցներ								
Դրամով	4,221	5,590	17,606	15,332	60,533	43,446	594,170	500,412
Արտարժույթով	73,835				530,660	144,322	1,980,890	1,781,896
Տեղաբաշխված միջոցներ								
Դրամով	38,410	8,743	14,231	3,702	158,625	143,334	1,020,877	587,799
Արտարժույթով	299,601	516,751	51,691	41,320	140,707	167,813	1,996,397	2,063,873

27. Պայմանական դեպքեր և պոտենցյալ պարտավորություններ

Ընկերությունը վարկային և այլ երաշխավորություններ չի տրամադրել:

28. Ակտիվների, պարտավորությունների և արտահաշվեկշռային հոդվածների կենտրոնացում

1.Տեղաբաշխված վարկերն ըստ տնտեսության ճյուղերի

	Անվանումը	2023թ.	2022թ.
1	Գյուղատնտեսություն	0	0
2	Թեթև արդյունաբերություն		4,242
3	Առևտուր	1,915,291	1,452,900
4	Սպառողական	346,389	323,300
5	Հիպոթեքային	1,832,023	1,927,464
6	Այլ	424,801	600,370
	Ընդամենը	**4,518,504**	**4,308,276**

* 4,518,504-ը՝ ամբողջ վարկային պորտֆելն է՝ ներառյալ արտաբալանսը:

2.Տեղաբաշխված վարկերը ըստ ՀՀ մարզերի

	Անվանումը	2023թ.	2022թ.
1	Երևան	32657867	3,452,350
2	Գեղարքունիք	210,816	
3	Շիրակ	105,722	41,881
4	Լոռի	11,357	114,634
5	Արմավիր	291,709	
6	Սյունիք	14,921	1,177
7	Տավուշ	71,464	54,882
8	Արագածոտն	72,961	31,275
9	Կոտայք	319,149	22,416
10	Արարատ	66,852	10,122
11	Վայոց Ձոր	28,155	579,539
12	ԼՂՀ	541	
13	Արտերկիր	59,070	
	Ընդամենը	**4,518,504**	**4,308,276**

Ընկերությունը ռիսկով տեղաբաշխված վարկերի, ներգրավված փոխառությունների և այլ ստացվելիք գումարների, ինչպես նաև ընկերության համար ռիսկ պարունակող հետհաշվեկշռային պայմանական պարտավորությունների գծով ձևավորել է ընդհանուր և հատուկ պահուստներ: Ընդհանուր պահուստը հաշվեկշռում ակտիվին հակակշիռ գրանցված պահուստ է, որը ձևավորվել է ստանդարտ ակտիվների գծով՝ ընդհանուր պահուստին կատարվող հատկացումների հաշվին: Հատուկ պահուստը հաշվեկշռում ակտիվին հակակշիռ գրանցված պահուստ է, որը ձևավորվել է հսկվող, ոչ ստանդարտ, կասկածելի և անհուսալի դասակարգված ակտիվների գծով՝ հատուկ պահուստին կատարվող մասահանումների հաշվին:

Պահուստավորումը կատարվել և ճշգրտվել է ամիսը 1 անգամ՝ ամսվա վերջին օրվա դրությամբ, պահուստում առկա ավելցուկային մնացորդը ուղղվել է եկամուտների հաշվին:
Ընկերության ակտիվների հնարավոր կորուստների պահուստաֆոնդերին 2023 թվականին կատարված զուտ մասհանումը կազմում է (84 085) հազ.դրամ:

29. Գրավադրված ակտիվներ

Ընկերությունը գրավադրված ակտիվներ չունի:

30. Գործարքներ կապակցված կողմերի հետ

(ա) Գործարքներ ղեկավար անձնակազմի և նրանց ընտանիքների անդամների հետ

Ղեկավարության վարձատրությունը

Տարվա ընթացքում ղեկավար անձնակազմը ստացել է ստորև ներկայացված վարձատրությունը, որը ներառված է Աշխատակազմի գծով ծախսեր՝ հոդվածում

Հազար դրամ	2023թ	2022թ.
Աշխատավարձ	41,850	31,325

(բ) Գործարքներ այլ կապակցված անձանց հետ

Ստորև ներկայացված են Ընկերության գործարքներն այլ կապակցված կողմերի հետ:

Ստացված Փոխառություններ

Հազ.դրամ

	2023թ.			2022թ.		
	Տոկոսային ծախս	Վարձավճար	Մնացորդ	Տոկոսային ծախս	Վարձավճար	Մնացորդ
	63,943		1,170,038	98,433		1,137,607
			51	2,340		71,535
	2,848		60,718	3,893		59,035
	12,693	8,600	310,724	22,506	8,600	275,603
	12,683		284,757	25,903		276,867
			2,300	323		2,300
	8,445			11,798		177,106
Ընդամենը	**100,612**	**8,600**	**1,828,588**	**165,196**	**8,600**	**2,000,053**

31. Պայմանական դեպքեր և պոտենցիալ պարտավորություններ

Հարկային օրենսդրության հակասություններ և երկիմաստություններ

ՀՀ հարկային համակարգը բնորոշվում է հաճախակի փոփոխվող օրենսդրությամբ, որը հաճախ հստակ չէ և տարընթերցումների տեղիք է տալիս: Հարկային հաշվառումը ենթակա է ստուգման և ուսումնասիրման իրավասու մարմինների կողմից, որոնց իրավունք է վերապահված կիրառել տույժեր և տուգանքներ:

Ընկերության ղեկավարությունը հավատացած է, որ համապատասխանորեն է գնահատել հարկային պարտավորությունները, հիմք ընդունելով օրենքների պաշտոնական մեկնաբանումները և պարզաբանումները:Այնուամենայնիվ, իրավասու մարմինները կարող են ունենալ այլ մեկնաբանություններ, և Ընկերության համար հետևանքները կարող են լինել էական, եթե իրավասու մարմիններին հաջողվի գործադրել իրենց մեկնաբանությունները:

31 Հաշվետու ամսաթվից հետո տեղի ունեցած դեպքեր

Հաշվետու ամսաթվից հետո որևէ դեպք կամ գործարք տեղի չի ունեցել, որը կարող է նշանակալի լինել Ընկերութան ֆինանսական վիճակի կամ ֆինանսական արդյունքի համար:

Ընկերության խորհրդի նախագահ,
գործադիր տնօրեն՝ **Ա.Արզումանյան**

Գլխավոր հաշվապահ
(Փորձագետ հաշվապահ) **Ռ. Մելիքյան**